

**Քիմիական անունը՝** բրոմուկոնազոլ (Վեկտրա)

**Գրանցման համարը (ըստ քիմիկատների մասին տեղեկատվական ծառայության)**  
(CAS)՝ 116255-48-2

**Մոլեկուլային բանաձևը՝** C<sub>13</sub>H<sub>12</sub>BrCl<sub>2</sub>N<sub>3</sub>O

### **Բնութագիրը**

Բրոմուկոնազոլը CHIPCO® արտադրանքի ակտիվ բաղադրամասն է (20%)։ Մակասպան նյութ է և օգտագործվում է հիմնականում ջերմոցային պայմաններում ոչ վաճառքի նպատակով աճեցվող վարդերի հիվանդությունների (սև կետեր) դեմ։ Այրվելիս քայքայվում է՝ առաջացնելով թունավոր գազեր կամ գոլորշիներ, ներառյալ ազոտի օքսիդներ, աղաթթու, ջրածնի բրոմիդ և ածխածնի մոնօքսիդ։ Բրոմուկոնազոլը անհոտ և անգույն բյուրեղների կամ փոշու տեսքով նյութ է։

### **Ազդեցությունը առողջության վրա**

#### **Մարդիկ**

Թունաքիմիկատն օրգանիզմ է թափանցում շնչառական և մարսողական համակարգերի միջոցով։ Մարսողական համակարգ թափանցելու դեպքում, եթե թունաքիմիկատի ազդեցությունը կարճատև է, կարող է առաջանալ ընկճվածություն (դեպրեսիա), իսկ երկարատև ազդեցության դեպքում, վնասվում է լյարդը և խախտվում վերջինիս գործառույթը (ֆունկցիան)։ Մաշկը չի գրգռում։

#### **Կենդանիներ**

Բրոմուկոնազոլը խիստ թունավոր է ջրային օրգանիզմների համար։

#### **Քաղցկեղածին հատկությունը**

Ըստ Քաղցկեղի հետազոտության միջազգային գործակալության (IARC), թունաքիմիկատը քաղցկեղածին չի համարվում։


## Շրջակա միջավայրում կայունությունը և քայքայվելու հատկությունը

Հողում, աերոբ պայմաններում բրոմուկոնազոլը շատ կայուն է և առաջացնում է մի շարք երկրորդային մետաբոլիտներ: 100-120 օր հետո հանքայնացումը կազմում է 1-4,4 %: Հողի ֆոտոլիզի լաբորատոր ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ֆոտոլիզը նպաստում է հողի մակերեսին բրոմուկոնազոլի քայքայմանը: Այս թունաքիմիկատը հատկապես կայուն է հիդրոլիզի նկատմամբ: Բնական ջրային միջավայրում ֆոտոլիզն այնքան էլ չի նպաստում բրոմուկոնազոլի քայքայմանը: Թե ինչ չափով կարող է բրոմուկոնազոլն աղտոտել մակերեսային և ստորգետնյա ջրերը, հնարավոր չէ ստույգ գնահատել, քանի որ չկան հավաստի տվյալներ հողում, դաշտային պայմաններում թունաքիմիկատի քայքայման ինտենսիվության վերաբերյալ:

### Հումանիշներ (սինտիմներ)

- 1-((2rs,4rs,2rs,4sr)-4-բրոմ -2-(2,4-դիքլորոֆենիլ)տոտրահիդրոֆուրֆուրիլ)-1h-1
- 1-((4-bromo-2-(2,4-դիքլորոֆենիլ)տոտրահիդրո-2-ֆուրանիլ)մեթիլ)-1h-1,2,4-տրիա
- 1h-1,2,4-տրազոլ,1-((4-բրոմո-2-(2,4-դիքլորոֆենիլ)տետրահիդրո-2-ֆուրանիլ)մեթիլ
- 1-((2RS,4RS,2RS,4SR)-4-բրոմո-2-(2,4-դիքլորոֆենիլ)տետրահիդրոֆուրֆուրիլ)-1H-1,2,4-տրիազոլ

### Վտանգավորության նշանը՝



Վնասակար է:

Ռիսկերը՝

Վտանգավոր է՝ մարսողական համակարգ թափանցելու դեպքում:

**Խորհուրդներ՝ անվտանգության ապահովման նկատառումներով**

Օգտագործեք հարմար պաշտպանիչ արտահագուստ:

Հղումներ՝

<http://www.chemnet.com/product/pclist--bromuconazole--0.html>

[http://www.alanwood.net/pesticides/index\\_cn\\_frame.html](http://www.alanwood.net/pesticides/index_cn_frame.html)

<http://www.epa.gov/opprd001/factsheets/bromuconazole.pdf>

[http://www.pesticideinfo.org/Detail\\_Chemical.jsp?Rec\\_Id=PC36318](http://www.pesticideinfo.org/Detail_Chemical.jsp?Rec_Id=PC36318)

<http://www.inchem.org/documents/icsc/icsc/eics1264.htm>

<http://actrav.itcilo.org/actrav-english/telearn/osh/ic/11625548.htm>

[http://www.chemicalbook.com/ProductChemicalPropertiesCB7299007\\_EN.htm](http://www.chemicalbook.com/ProductChemicalPropertiesCB7299007_EN.htm)

<http://www.efsa.europa.eu/en/scdocs/doc/s136r.pdf>



*Տեղեկատվությունը թարգմանվել է Եվրամիության ֆինանսական աջակցությամբ: Սույնի բովանդակությունը պատկանում է Արմիկա ասոցիացիային և «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ին և չի կարող դիտվել որպես Եվրամիության դիրքորոշման արտացոլում:*